

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային
շարժման հիմնարար սկզբունքները

Fundamental Principles of Red Cross and
Red Crescent Movement

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

HUMANITY

ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

IMPARTIALITY

ՉԵԶՈՔՈՒԹՅՈՒՆ

NEUTRALITY

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

INDEPENDENCE

ԿԱՄԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ

VOLUNTARY SERVICE

ԵԶԱԿԻՈՒԹՅՈՒՆ

UNITY

ՀԱՄԸՆԴՐԱՆՐՈՒԹՅՈՒՆ

UNIVERSALITY



Անցավ ևս մեկ տարի՝ լի հնարավորություններով ու մարտահրավերներով, ձեռքբերումներով ու դժվարություններով: Մեր տարածաշրջանը շարունակում է մսալ աշխարհի այն թեժ կետերից մեկը, որտեղ տարբեր ճգնաժամերը խոցելի խմբերի մարդասիրական կարիքներն ավելի ու ավելի են խորացնում: Այս իրավիճակում մարդասիրական կազմակերպությունների դերն ու նշանակությունն ավելի են կարևորվում, և մենք շարունակում ենք իրականացնել մեր առաքելությունը հենց այդ պատասխանատվության գիտակցությամբ:

Ռազմավարական ուղղություններով գործունեություն իրականացնելիս հատուկ ուշադրություն ենք դարձրել ՀԿԽԸ զարգացման գործընթացներին, մասնավորապես՝ Ազգային ընկերության մարզային մասնաճյուղերի շարունակական զարգացմանը, տեղական ռեսուրսների մոբիլիզացմանը, արտակարգ իրավիճակներին արձագանքելու պատրաստվածության բարձրացմանը և անվտանգության մշակույթի տարածմանը:

ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերում կամավորների ու անձնակազմի ներուժի՝ հմտությունների ու կարողությունների զարգացումը, հնարավորությունն է ընձեռում տարեցտարի բարձրացնելու մատուցվող ծառայությունների որակը և գործընթացների թափանցիկությունը, ինչը նպաստում է համայնքների դիմակայունության բարձրացմանը:

Շարունակել ենք երիտասարդությանն ուղղված ծրագրերը՝ նպաստելով նրանց կայուն զարգացմանն ու աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը:



Another year has passed, full of opportunities and challenges, achievements and difficulties. Our region remains one of the hotspots in the World, where various crises deepen the humanitarian needs of vulnerable groups. In this situation, the role and significance of humanitarian organizations are becoming more and more important; we continue to carry out our mission with the awareness of that very responsibility.

While carrying out activities in strategic directions, we paid special attention to the ARCS development processes, in particular, the continuous development of the regional branches of the National Society, the mobilization of local resources, the increase of preparedness to respond to emergencies, and the spread of safety culture.

The development of skills and capacities of volunteers and staff in ARCS regional branches provides an opportunity to increase the quality of services provided, and the transparency of the processes, year by year, which contributes to increasing the resilience of communities.

We have continued the programs aimed at the Youth, contributing to their sustainable development and increasing competitiveness in the labor market.

Մեծ աշխատանք ենք տարել կամավորության գաղափարի հանրայնացման և կամավորական ներուժի զարգացման ուղղությամբ:

2019 թվականին, շարունակելով մեր ակտիվ գործունեությունը բոլոր ռազմավարական գործունեություններով, կարող ենք փաստել, որ նոր գործընկերներ և ռեսուրսներ ներգրավելու և շահառուների առավել լայն շրջանակ ընդգրկելու ուղղությամբ մեր ջանքերն ապարդյուն չեն անցել:

Տարեցտարի առավել խորը և արդյունավետ համագործակցություն է հաստատվում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչը հնարավորություն է տալիս, տանել մեր աջակցող դերն ու համատեղ և համակարգված իրականացնել խիստ կարիքի վրա հիմնված արձագանք:

Մեր գործընկերների վստահությունն ու շահառուների երախտագիտությունը մեզ օգնում է առաջ շարժվել՝ ներգրավելով նոր ռեսուրսներ և իրականացնելով նոր ծրագրեր՝ առավել խոցելի խմբերի մարդասիրական կարիքներին բազմակողմանի արձագանք ապահովելու համար:

Մենք շնորհակալություն ենք հայտնում մեր մշտական և նոր գործընկերներին, փորձառու և սկսնակ կամավորներին՝ մեր մարդասիրական առաքելության իրականացմանն աջակցելու համար:

We have done a lot of work to promote the idea of volunteering and to develop volunteer potential.

In 2019, continuing our active work in all strategic directions, we can state that our efforts to attract new partners, resources and a wider range of beneficiaries have not been in vain.

From year to year, deeper, more effective cooperation is established with state government and local self-government bodies, which enables us to play our auxiliary role, and jointly and systematically implement response based on the urgent needs.

The trust of our partners and the gratitude of the beneficiaries help us move forward by attracting new resources and implementing new programs to provide a comprehensive response to the humanitarian needs of the most vulnerable groups.

We thank our permanent and new partners, experienced and beginner volunteers for supporting our humanitarian mission.

**Նախագահ
Մխիթար Մնացականյան**



**President
Mkhitar Mnatsakanyan**

**Գլխավոր քարտուղար
Աննա Եղիազարյան**



**Secretary General
Anna Yeghiazaryan**

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, ըստ իր 2011-2020 թթ. ռազմավարության, առաջնորդվում է հետևյալ արժեքներով:

Մարդիկ

Մենք զարգացնում ենք մարդկանց և համայնքների կարողությունները՝ գործելու հանդուրժող միջավայրում և գտնելու կայուն լուծումներ իրենց ամենաամհրաժեշտ և խոցելի կարիքները հոգալու համար:

Ազնվություն

Մենք աշխատում ենք համաձայն մեր հիմնարար սկզբունքների՝ թափանցիկ և պատասխանատու կերպով:

Համագործակցություն

Որպես Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման անդամ՝ մենք համագործակցում ենք կառավարության, ինչպես նաև այլ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, հարգելով մեր խորհրդանիշները և ներկայացված անկախությունը, անկողմնակալությունը և չեզոքությունը:

Բազմազանություն

Մենք հարգում ենք համայնքների և մեր կամավորների, անդամների և աշխատակիցների բազմազանությունը՝ հիմնվելով անխտրականության և մեր անկողմնակալության և համընդհանրության սկզբունքների վրա:

Առաջնորդություն

Մենք ցուցաբերում ենք առաջնորդություն և մեր աշխատանքում ձգտում ենք գերազանցության՝ ուշադրություն դարձնելով համայնքների և դրանց իրավունքներին, կարիքներին և խոցելիությանը:

Նորարարություն

Մենք ներշնչվում ենք մեր ժառանգած պատմությունից և ավանդույթից, սակայն միաժամանակ փորձում ենք գտնել ստեղծագործական, կայուն լուծումներ խնդիրներին, որոնք վտանգում են փոփոխվող աշխարհում ապրող մարդկանց բարեկեցությունը և արժանապատվությունը:

Մենք աշխատում ենք հետևյալ ռազմավարական ուղղություններով.

Աղետների կառավարում

Բնակչության տեղաշարժ

Որոնում ծառայություն

Առաջին օգնություն

Սոցիալ-առողջապահություն

Մարդասիրական արժեքների տարածում

Միջազգային համագործակցություն

Երիտասարդական, կամավորություն և անդամակցություն

Կազմակերպության զարգացում

Ռեսուրսների մոբիլիզացում



Մայիսի 22-23 կազմակերպվեց աշխատաժողով, որի ընթացքում քննարկվեց և վերջնականացվեց Հայաստանում Կարմիր խաչի շարժման կողմից արտակարգ իրավիճակների դիմակայության գործողությունների ծրագիրը: Աշխատաժողովին մասնակցում էին ՀԿԽԸ բոլոր բաժինների ղեկավարները, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի, Ավստրիական, Շվեյցարական, Դանիական և Գերմանական Կարմիր խաչերի ներկայացուցիչները:

ՀԿԽԸ ղեկավար կազմի համար Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աջակցությամբ հունիսին կազմակերպվեց շտաբային ուսումնալարժանք, որի սցենարն էր Երևանում մասշտաբային քաղաքացիական ընդվզումները: Ուսումնալարժանքի ժամանակ ամրապնդվեցին ՀԿԽԸ կարողությունները՝ արձագանքելու վերոհիշյալ արտակարգ իրավիճակներին, ինչպես նաև վերլուծվեցին ուսումնալարժանքների արդյունքները և սահմանվեցին կազմակերպության արձագանքման կարողությունների հետագա զարգացման ուղիները:

ՀԿԽԸ աշխատակիցները և կամավորները, ինչպես նաև Երևանի արագ արձագանքման խումբը մասնակցեցին ԱԻ նախարարության և ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրեսենյակի կողմից կազմակերպված ուսումնալարժանքին, որի սցենարն էր Միջին արևելքում ծագած հակամարտության հետևանքով բնակչության հոսքը դեպի Հայաստան: Ուսումնալարժանքի ժամանակ ամրապնդվեցին ՀԿԽԸ, պետական և ոչ պետական շահագրգիռ կողմերի հետ համատեղ արձագանքման գիտելիքները, ներկայացվեցին նման արտակարգ իրավիճակի դեպքում արձագանքմանը մասնակցելու ՀԿԽԸ կարողությունները:

ՀԿԽԸ աշխատակիցները և կամավորները ամրապնդեցին իրենց գիտելիքները և հրահանգային հմտությունները դրամային հումանիտար աջակցության ոլորտում, մասնակցելով Դանիական Կարմիր խաչի կողմից կազմակերպված քառօրյա հրահանգային դասընթացին:

Արտակարգ իրավիճակներին համատեղ նախապատրաստվելու և արձագանքելու ընթացակարգերը հստակեցնելու նպատակով ՀԿԽԸ ձեռնամուխ եղավ կնքելու փոխըմբռնման հուշագրեր Վայոց Ձորի, Տավուշի մարզային իշխանությունների հետ:

**Պատրաստ լինել արձագանքելուն.
Արդիականացված պատրաստվածություն և արձագանքման կարողություններ Հարավային Կովկասում**

Ծրագիրը մեկնարկել է 2019թ-ի հունվարին և նպատակ ունի նպաստել Հայաստանի բնակչության պաշտպանության համակարգերի պատրաստվածության մակարդակի բարձրացմանը, բնակչության պաշտպանության և հումանիտար օգնության դերակատարների

մասնավորապես՝ Կառնուտ, Բասեն, Յովիտ, Կամո, Ջրառատ և Շիրակ համայնքներում ՀԿԽԸ կողմից իրա-կանացվեց մարդասիրական օգնության տրամադրում աղետից առավել տուժած մարդկանց:
Ընդհանուր առմամբ ծրագրում ընդգրկվեցին 925 ընտանիք՝ 4606 մարդ, որոնց տրամադրվեց դրամական աջակցություն: «Հայքիզնեսբանկի» Գյումրու և Անի մասնաճյուղերի միջոցով շահառու ընտանիքներից յուրաքանչյուր անդամ ստացավ 32 575 ՀՀ դրամ:



միջև համագործակցությունն ընդլայնելու միջոցով: Ծրագրի հիմնական թիրախ հանդիսանում են ՀԿԽԸ Երևանի, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի արձագանքման թիմերը, ինչպես նաև բնակչության պաշտպանության ոլորտում համագործակցող կառույցները:

2019թ.-ին, համագործակցելով ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության, մարզային և տեղական իշխանությունների և այլ շահագրգիռ գործընկերների հետ սերտ համագործակցությամբ հնարավոր դարձավ գրանցել հետևյալ հիմնական ձեռքբերումները. Ամրապնդվեց ՀԿԽԸ արտակարգ իրավիճակներին արձագանքելու կարողությունները, մասնավորապես դասընթացների միջոցով թարմացվեցին և ամրապնդվեցին մարզային 5 արձագանքման թիմերի առաջին օգնության և սոցիալ-հոգեբանական աջակցության գիտելիքները, յուրաքանչյուր արձագանքման թիմի համար կազմակերպված ուսումնամարտանքների ընթացքում թիմերի անդամները գործնականում կիրառեցին իրենց գիտելիքները և ամրապնդեցին իրենց արձագանքման հմտությունները:

Մարդասիրական օգնություն Շիրակի մարզում կարկտահարությունից տուժածներին

2019թ. հունիսին, Շիրակի մարզում տեղի ունեցած կարկուտի հետևանքով տուժած համայնքներից վեցում,

Կարկուտի հետևանքով Շիրակի մարզի 14 համայնքի բնակիչներ կորցրել էին գրեթե ամբողջ բերքը:

Պաշտոնական տվյալների համաձայն խիստ տուժել էին 14 համայնքների 3900 տնտեսություններ և ավելի քան 2065 հա ցանքատարածություն: Աղետի հասցրած ընդհանուր վնասը կազմել է 560 մլն դրամ:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ որպես կառավարությանն օժանդակ կազմակերպություն մարդասիրական ոլորտում, տվյալ համայնքներին աջակցելու նպատակով, իրականացրել էր կարիքների գնահատում, որի արդյունքում ամենախոցելի էին համարվել Կառնուտ, Բասեն, Յովիտ, Կամո, Ջրառատ և Շիրակ համայնքները, որտեղ կարկուտի հետևանքով մարդիկ կորցրել էին բերքի 75-100 տոկոսը: Մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ՝ ճշգրտվել և հստակեցվել են առավել տուժած ընտանիքների ցուցակները: Միջոցներ հայթայթելու նպատակով ՀԿԽԸ-ն համապատասխան ծրագրով դիմել էր Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի Աղետներին արձագանքման արտակարգ ֆոնդին և ստացել 318.710 շվեյցարական ֆրանկ (152.343.80 ՀՀ դրամ) աղետից առավել տուժածներին մարդասիրական օգնություն տրամադրելու համար:



Տարբեր ճգնաժամային իրավիճակների հետևանքով առաջացած բնակչության հոսքերը և տեղաշարժը դառնում են մարդկանց իրավունքների ոչ լիարժեք կատարման, հատուկ կարիքներ ունեցող խմբերի խոցելիության աճի, սոցիալական և հոգեբանական ծանր իրավիճակների, բռնության և մարգինալացման պատճառ: ՀԿԽԸ-ն Բնակչության տեղաշարժի ուղղությամբ իրականացնում է ռեսուրսների հայթայթում և իրականացնում է ապաստան հայցողների, փախստականների, փախստականի նման կարգավիճակ ունեցող և տեղահանված անձանց պաշտպանությանն ու ինտեգրմանն ուղղված ծրագրեր:

2019թ. ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գրասենյակի հետ սերտ համագործակցությամբ տեղահանված բնակչությանն աջակցելու նպատակով շարունակել ենք մեր գործունեությունը ապաստան հայցողների ընդունման պայմանների բարելավման, ընտանիքների ինքնաբավության և ինտեգրման ապահովման, սեռով և գենդերով պայմանավորված բռնության դեպքերի կանխարգելման և արձագանքման ուղղությամբ:

2019 թվականին ՀՀ-ում ապաստանած փախստական ընտանիքների համար Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իրականացրել է տնտեսական ինտեգրմանն ուղղված բազմաբնույթ ծրագրեր, որոնցից էր եկամտաբեր գործունեության խթանումը՝ համապատասխան գործիքների, սարքավորումների կամ խոշոր եղջերավոր անասունների տրամադրումը: Եկամտաբեր գործունեությունը փախստականների շրջանում ամենապահանջված աջակցության ձևը դարձավ: Խոհարարական, վարսահարդարման, մեքենայի վերանորոգման և մի շարք այլ ոլորտների աջակցությունը հնարավորություն է տալիս փախստականներին ու տեղահանված անձանց սեփական փոքր բիզնեսը սկսել Հայաստանում:

2019 թվականին Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից 157 փախստական կամ փախստականի նման կարգավիճակ ունեցող ընտանիքներ, որոնք Հայաստան էին եկել Սիրիայից, Ադրբեջանից, Եմենից, Նիգերից ու Լեռնային Ղարաբաղից, ստացան համապատասխան գործիքներ և բիզնես-խորհրդատվություն՝ սեփական ինքնաբավությունը ապահովելու և եկամուտ վաստակելու նպատակով:

Ընդհանուր առմամբ **282** մտահոգության առարկա հանդիսացող (ապաստան հայցողներ, փախստականի կարգավիճակ ստացած, փախստականի նման կարգավիճակ ունեցող և տեղահանված) անձ դիմել է ՀԿԽԸ՝ տարբեր կարիքներով: 2019թ. Սյունիքի, Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերի մարզային մասնաճյուղերի միջոցով և ՀՀ ԱԿԾ ու ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հետ սերտ

հայցողների կացարանում, որտեղ անհատական խորհրդատվություններ ենք տրամադրել՝ իրավական, բժշկական, հոգեբանական, բնակության վայրի, աշխատանքի, սոցիալական կարիքների և այլ թեմաներով: Խորհրդատվությունների ընթացքում ՀԿԽԸ և այլ համագործակից կառույցների խնդրանքով ապահովվել է **1613 ժամ բանավոր և 306 էջ** գրավոր թարգմանություն՝ պարսկերեն, թուրքերեն, արաբերեն, ֆրանսերեն, ռուսերեն,



համագործակցությամբ՝ սահմանակետերի, ինչպես նաև Չվարթսոց միջազգային և Գյումրու օդանավակայաններում պարբերաբար իրականացրել ենք սահմանի մոնիթորինգային **54** այցելություն, նշված պետական գերատեսչությունների աշխատակիցների վերապատրաստումներ: Տարվա ընթացքում սահմանակետերում մի քանի ապաստան հայցողի և պոտենցիալ ապաստան հայցողի աջակցություն է տրամադրվել խորհրդատվության և ուղղորդման միջոցով: Մենք որոշել ենք կարիքներն ու ծանոթացրել ենք ապաստան հայցելու ընթացակարգերին՝ ազգային օրենսդրության համաձայն, ինչպես նաև մեր գործունեությամբ նվազեցրել ենք հետդարձի հնարավոր դեպքերը:

Սահմանակետերում աշխատող համապատասխան անձնակազմի՝ ՀՀ ԱԿԾ սահմանապահ զորքերի ներկայացուցիչների և ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության աշխատակիցների համար կազմակերպվել են մի շարք դասընթացներ և կլոր սեղաններ՝ փախստականների և ապաստան հայցողների իրավունքների, միջազգային և տեղական ընթացակարգերի, Եվրամիության լավագույն փորձի և այլ նմանատիպ թեմաների վերաբերյալ:

Ամեն շաբաթ մոնիթորինգային այցեր ենք իրականացրել նաև ՀՀ միգրացիոն ծառայության ապաստան

անգլերեն, պուշտու, եզդիերեն, քրդերեն և այլ լեզուներով: Սեռով ու գենդերով պայմանավորված բռնությունների (ՍԳՊԲ) կանխարգելման նպատակով **4 դասընթաց** ենք անցկացրել մտահոգության առարկա հանդիսացող **74** անձանց համար: Սեռով ու գենդերով պայմանավորված բռնությունների դեմ պայքարի 16-օրյա քարոզարշավի շրջանակներում 143 մտահոգության առարկա հանդիսացող կանայք և տղամարդիկ ներգրավվել են տարբեր միջոցառումներում /խոհարարության օր՝ Մասիսի բարեգործական ճաշարանում, Tedx, "Կանայք պատմության մեջ" գրքի քննարկում/: Սեռով և գենդերով պայմանավորված բռնությունների կանխարգելում բաղադրիչով իրականացվել է նաև **2 դասընթաց** թարգմանիչների համար/ **28 մասնակից**/, համագործակից կառույցների համար **3 դասընթաց**, ստեղծվել են համայնքային աշխատանքային խմբեր/ Արմավիր, Բագրատաշեն, Զարենցավան, Դարբնիկ, Գեղարքունիք, Սյունիք, որոնք վերհանելով տեղի հիմնախնդիրները ստացել են գրանտներ՝ դրանք լուծելու նպատակով: Շուրջ **163** փախստական և տեղացի երիտասարդների համար 2019թ. ընթացքում իրականացվել է նաև ՍԳՊԲ ոչ ֆորմալ **12 հանդիպում-գրույց**, մտահոգության առարկա հանդիսացող փախստական երիտասարդների համար իրականացվել են ամառային և ձմեռային դպրոցներ՝ ՍԳՊԲ կանխարգելում թեմայով /ընդհանուր **52 մասնակից**/:



Ստեղծել ենք նաև Կանանց փոխաջակցման խմբեր/ **13 հանդիպում, 335 մասնակից**/, որի շրջանակներում կայացող ամենամսյա հանդիպումները օգնել են նվազեցնել կանանց մոտ տեղահանման հետևանքով առաջացած տրավմաների ազդեցությունը, կանխարգելել հոգեբանական բազմաթիվ խնդիրներ և ընտանեկան կոնֆլիկտներ, կանանց հզորացման, գիտելիք և տեղեկատվություն փոխանցելու միջոցով՝ նվազեցնել գեղարվեստական պայմանավորված բռնությունը:

2019 թվականի նոյեմբերին ԶԿԽԸ Զուլվեյթի Կարմիր մահիկի հետ համագործակցությամբ մեկնարկեց աջակցության նոր ծրագիր՝ ի օգնություն Զայաստան տեղահանված սիրիահայերի: Երկու ընկերությունները Բոյուսելում կնքեցին համագործակցության հուշագիր: Ծրագիրը ներառում է սոցիալական և առողջապահական օգնություն և պաշտպանություն սիրիահայերին: Բացի այդ, սիրիացի ուսանողները կներառվեն կրթավճարների աջակցության ծրագրերում: 2018 թվականին մեկնարկել է ԵՄ ՄԱԴԴՊ ֆոնդի «Սիրիահայերի և տեղացիների դիամակայունության բարձրացում» ծրագիրը, որի շրջանակներում տրամադրվում է սոցիալական և տնտեսական աջակցություն սիրիահայերին և տեղացիներին:

Առաջին բաղադրիչով բնակարանային վարձի մասնակի փոխհատուցում է տրամադրվում առավել խոցելի սիրիահայ 100 ընտանիքներին: 2019 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում **161** սիրիահայ ամենախոստցելի ընտանիք ստացել է ամսական 100 եվրոյին համարժեք դրամ բնակվարձի փոխհատուցման համար: Մյուս բաղադրիչը տնտեսական ինտեգրումն է, մասնավորապես վճարովի մասնագիտական վերապատրաստումները, քանի որ Զայաստանում ինչպես տեղացիների, այնպես էլ սիրիահայերի համար աշխատանք գտնելը լուրջ մարտահրավեր է իրենից ներկայացնում: Մասնագիտական վերապատրաստումները վճարվում են Զայական Կարմիր խաչի ընկերության կողմից՝ յուրաքանչյուր ամսվա համար մեկ մասնակցին վճարելով 125 եվրոյին համարժեք 33 դրամ: Բաղադրիչի շրջանակներում 2019 թվականի ընթացքում **53** շահառու մասնակցել է վճարովի մասնագիտական վերապատրաստման և նրանցից **47**-ը պրակտիկայի ավարտին ձեռք են բերել մշտական զբաղվածություն:

Երբ օգտակար ես լինում մարդկանց, դրա կրկնակին ետ ես ստանում. Մերի Վարդանյան

Մերի Վարդանյանն արդեն մեկ տարի է, ինչ կամավոր է Հայկական Կարմիր խաչի ընկերության «Սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոնում»: Ամեն ինչ սկսվեց Հայկական Կարմիր խաչի ընկերության ֆեյսբուքյան էջի «Հաղորդակցման հմտություններ» թեմայով դասընթացի հայտարարությունից:

հետ գալ, կամ եթե երիտասարդ կա՝ երիտասարդի օգնությամբ, հասցեն բացատրում ես, փորձում ես ամեն կերպ համոզել և բերել, ու ինձ թվում է՝ ստացվում է: Հատկապես այն կանայք, որոնք, օրինակ՝ չունեն աշխատանք, հիմա ասում են՝ ամբողջ օրը տանն ենք, եթե նման բան լինի, մեզ անպայման տեղյակ պահեք մենք հաճույքով նորից կմասնակցենք:

Կամավորության մասին Մերին ասում է.



Եկավ, մասնակցեց դասընթացին, ծանոթացավ Սիրիահայերի ինտեգրման ուղղված ծրագրերին և, մեծ ոգևորությամբ, ներգրավվեց:

- Կենտրոնի հոգեբանները խորհրդատվություն են տրամադրում սիրիահայերին, իսկ սոցիալական ինտեգրման համար կազմակերպում ենք տարբեր միջոցառումներ՝ այցեր թանգարաններ, կինոթատրոններ, թատրոններ, էքսկուրսիաներ քաղաքից դուրս: Կազմակերպել ենք հանդիպումներ խոհարարների հետ, դիմահարդարման, ասեղնագործության, իսամբի, առողջության և այլ թեմաներով դասընթացներ, - ասում է Մերին: - Ես կազմակերպչական աշխատանքներով եմ զբաղվում՝ զանգում եմ սիրահայերին, ծանոթացնում ծրագրին, լսում իրենց հետաքրքրությունները, առաջարկությունները:

Մերին կարծում է, որ ծրագիրն հաջողված է և կարևոր խնդիր է լուծում՝ նպաստում է սիրիահայերի ինտեգրմանը: Դժվարություններ ևս լինում են.

- Չանգում ես, մարդիկ ասում են, մենք տանից դուրս չենք գալիս, դա ամենացավոտ պահն է, հատկապես երբ տարիքով կանայք են լինում, ասում են՝ մենք ոչ մի տեղ չենք գնում, ոչ մի փողոց չգիտենք, կմոլորվենք, և դու փորձում ես համոզել, որ կարող է ընկերուհու

- Զուների ինքնավստահություն ու համարձակություն, հիմա ավելի կազմակերպված և պատասխանատու եմ, բարելավվեցին հաղորդակցման հմտություններս, հանդուրժող և պատրաստակամ եմ, փորձում եմ հնարավորինս բոլորին օգնել, օգուտ տալ: Երբ դու քո աշխատանքով օգտակար ես լինում մարդկանց, ինչքան որ տանիս ես, դրա կրկնակին ստանում ես:

Մերին վերջերս մասնակցել էր Հայկական Կարմիր խաչի ընկերության «Երիտասարդական նորարարական ճամբարին», որի շրջանակներում մասնակիցները հնարավորություն ունեին դիմելու փոքր դրամաշնորհի՝ իրենց նախաձեռնություններն իրականացնելու համար: Մերիի ներկայացված ծրագիրն արժանացել է հավանության և արդեն մեկ ամիս է ինչ գործում է՝ դրա շնորհիվ հինգ ամիս սիրիահայ երիտասարդները ռուսերեն են սովորելու:

ԻԲԻՍ ծրագիրը իրականացվում է Ի պատասխան Սիրիական ճգնաժամի ստեղծված եվրոպական միության տարածաշրջանային Թրասթ Ֆոնդի՝ «Մադադ» - ի, Ավստրիական զարգացման համագործակցության և Ավստրիական Կարմիր խաչի ֆինանսական աջակցությամբ: Ավստրիական Կարմիր խաչի կողմից ղեկավարվող կոնսորցիումի կողմից, որի անդամներն են Հայկական կարիտաս Բարեգործական ՀԿ-ն, Հայկական Կարմիր խաչի ընկերակցության, Սիրիահայերի հիմնախնդիրների համակարգման կենտրոնի և ՓՄՉ համագործակցություն ասոցիացիայի կողմից:



Հայկական Կարմիր խաչի ընկերության Որոնում ծառայության գործունեությունն ուղղված է բնակչության տեղաշարժի արդյունքում կազմալուծված ընտանիքների վերամիավորմանը, պատերազմների, աղետների և հակամարտությունների հետևանքով անհայտ կորածների որոնմանը և զոհվածների շիրիմների վայրը հաստատող փաստաթղթերի հայտնաբերմանը, Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում տարհանված, գերության մեջ և հարկադիր աշխատանքային գաղութներում գտնվելու փաստը հաստատող փաստաթղթերի որոնմանը և հատկացմանը:

Ընտանեկան կապերի վերականգնում (ԸԿԿ)

ՀԿԽԸ Որոնում ծառայությունը 2019թ. ընթացքում ստացել և բացել է 28 որոնման հայտ՝ հետևյալ ուղղություններով, անհատների որոնում, ընտանիքի անդամների հետ վերամիավորմանը կամ սոցիալական իրավիճակի բարելավմանը նպաստող փաստաթղթերի որոնում և հատկացում, զոհվածների շիրիմների գտնվելու վայրի որոնում և դրանց գոյությունը հաստատող փաստաթղթերի տրամադրում, Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում տարհանված, գերության մեջ և հարկադիր աշխատանքային գաղութներում գտնվելու փաստը հաստատող փաստաթղթերի որոնում և հատկացում:

Տվյալների բազայի տեղադրում

2019թ. ՀԿԽԸ-ն անցել է ԸԿԿ տվյալների թվայնացման, որի նպատակով տեղադրվել է FLanswer տրվյալների բազան և ծրագրից օգտվելու համար անձնակազմն անցել է համապատասխան դասընթացի՝ ժնկից ժամանած մասնագետների օգնությամբ:

Կամավորների վերապատրաստում

Կամավորների՝ Որոնման հայտերի ընդունման հրմտությունների բարելավման նպատակով, տարվա ընթացքում պարբերական հանդիպումներ են անցկացվել ՀԿԽԸ բոլոր մարզային մասնաճյուղերում: Հանդիպումների նպատակն էր մարզերում Որոնում ծառայության և, մասնավորապես, մարզերում Որոնման հայտերի ընդունման գործընթացի կազմակերպման մասին իրազեկության տարածումը:



Սատարում անհայտ կորածների ընտանիքներին

ԿԽՄԿ-ի տվյալներով՝ Ղարաբաղյան հակամարտության հետևանքով անհայտ կորած է համարվում 4541 մարդ, որոնցից մոտ 400-ի մասին որոնման հայտեր բացվել են Հայաստանում: ԿԽՄԿ-ն իրականացրել է տարբեր գնահատումներ և եկել այն եզրակացության, որ, նույնիսկ ավելի քան 25 տարի անց, անհայտ կորածների ընտանիքներն (ԱԿԸ) ունեն տևտեսական, իրավական, հոգեբանական և/կամ սոցիալական կարիքներ:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, ԿԽՄԿ հայաստանյան պատվիրակության ֆինանսավորմամբ, իրականացնում է «Սատարում անհայտ կորածների ընտանիքներին» ծրագիրը, որի նպատակն է սատարել անհայտ կորածների ընտանիքներին՝ հարազատի անհետացման արդյունքում առաջ եկած սոցիալ-հոգեբանական ծանր հետևանքները հաղթահարելու գործում:

2019թ. ծրագրում ներգրավված էր 200 ընտանիք Շիրակի (13 ընտանիք), Գեղարքունիքի (23 ընտանիք), Վայոց Ձորի (5 ընտանիք), Արմավիրի (41 ընտանիք), Լոռու (22 ընտանիք), Տավուշի (14 ընտանիք), Սյունիքի (46 ընտանիք), Արարատի (36 ընտանիք) մարզերից: ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերը կանոնավոր կապ են պահպանում այս մարզերում բնակվող անհայտ կորածների ընտանիքների հետ: Ըստ անհրաժեշտության՝ շահառու ընտանիքների համար անցկացվել են հանդիպումներ սոցիալական, առողջապահական, հոգեբանական ոլորտների մասնագետների հետ:



ՀԿԽԸ Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոնը ԱՕ գիտելիքներ և հմտություններ է տարածում բնակչության տարբեր խավերի և տարիքային խմբերի շրջանում, իրականացնում է ԱՕ սպասարկում զանգվածային միջոցառումների ժամանակ, ինչպես նաև ծավալում գործունեությունը՝ ուղղված աճող սերնդի անվտանգ վարքագծի ձևավորմանը:

Կենտրոնն իրականացնում է Առաջին օգնության եվրոպական խորհրդատվական կենտրոնի չափանիշներին համապատասխանող առաջին օգնության (ԱՕ) և անվտանգ վարքագծի դաստիարակման (ԱՎԴ) դասընթացներ տարբեր տարիքային և մասնագիտական խմբերի համար:

ԱՕ դասընթացներ

2019թ.-ին դասընթացներ են իրականացվել ՀԿԽԸ կամավորների, տարբեր կազմակերպությունների աշխատակիցների, Տավուշի սահմանամերձ գյուղերի քաղաքացիական պաշտպանության թիմերի անդամների, սահմանամերձ և հեռավոր համայնքների բնակիչների համար: Ընդհանուր առմամբ, 2019 թվականի ընթացքում կենտրոնն իրականացրել է **100** դասընթաց և **20** սեմինար, որոնց մասնակցել է **2200** մարդ: Մասնավորապես՝ դասընթացներ և սեմինարներ են իրականացվել Բրիտանական դեսպանատան Հայաստանյան գրասենյակի, «Լիթ ջիմ», «Ջեյ Թի Այ», «Դաբլ թրի բայ Հիլտոն», «Չվարթնոց» օդանավակայանի, «Արշավներ ակումբ», ՊՆ հոգեբանական և ռազմաբժշկական կենտրոնների և մի շարք այլ կազմակերպությունների աշխատակիցների համար:

Առաջին օգնության դասընթացներ ՀՀ սահմանամերձ համայնքների բնակիչների համար

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) հետ համագործակցության շրջանակներում իրականացվել է «Առաջին օգնության հիմունքներ» դասընթացներ ՀՀ Տավուշի մարզի **10** և Վայոց Ձորի սահմանամերձ (Բարեկամավան, Դովեղ, Բաղանիս, Ոսկեպար, Սևբար, Կիրանց, Ներքին Ծաղկավան, Բերքաբեր, Վազաշեն, Այգեհովիտ, Արենի) համայնքներում: Դասընթացներին մասնակցել է **108** հոգի:

10 սահմանամերձ համայնքների վերապատրաստված բնակիչների մասնակցել են Առաջին օգնության միջհամայնքային մրցումներին և գործնականում ցուցադրել են իրենց գիտելիքներն ու հմտությունները: Հաղթող է ճանաչվել Վազաշեն թիմը, 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրեցին են Դովեղ և Բարեկամավան թիմերը:

Առաջին օգնության դասընթացներ ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի կամավորների համար

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) օժանդակությամբ իրականացվել է **5** «Առաջին օգնության հիմունքներ» դասընթաց Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի, Արարատի և Վայոց Ձորի 79 կամավորների համար:

Կազմակերպվել են ԱՕ մրցումներ ՀԿԽԸ Տավուշի, Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Արարատի և Երևանի թիմերի միջև: Հաղթող է ճանաչվել Երևանի թիմը, իսկ Սյունիքի և Վայոց Ձորի թիմերը զբաղեցրել են համապատասխանաբար 2-րդ և 3-րդ տեղերը:



ԱՕ հրահանգիչների նախապատրաստում

2019թ. Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) օժանդակությամբ իրականացվել է ԱՕ հրահանգիչների, 33 մարզերից և Արցախից, վերապատրաստման 2 դասընթաց, որին մասնակցել է 345Ը 20 ԱՕ հրահանգիչ:

Արտակարգ իրավիճակների նախարարություն, Կարմիր խաչի միջազգային կոմիտե և Հայկական Կարմիր խաչի ընկերություն (ԱԻՆ-ԿԽՄԿ-ՀԿԵԸ) համագործակցություն

ԱԻՆ-ԿԽՄԿ-ՀԿԵԸ համագործակցության ծրագրի շրջանակներում իրականացվել են «Առաջին օգնության հիմունքներ» թարմացնող դասընթացներ Տավուշի մարզի 12 սահմանամերձ (Ազատամուտ, Չինարի, Այգեպար, Մովսես, Պառավաբար, Ներքին Կարմիր աղբյուր, Ոսկևան, Բերդավան, Կոթի, Դովեղ, Չորաթան և Սարիգյուղ) գյուղերի Զաղացիական պաշտպանության թիմերի 196 անդամների համար:

Կազմակերպվել է 5-օրյա «Առաջին օգնության հիմունքներ» դասընթաց սահմանամերձ գյուղերի թիմերի նոր 60 անդամների համար: Դասընթացների ընթացքում մասնակիցները ստացել են ԱՕ ցուցաբերման տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ: Բոլոր մասնակիցներին տրամադրվել են «Առաջին օգնության տարրեր» ուսումնական ձեռնարկը, իսկ յուրաքանչյուր թիմին՝ թարմացվել է 2-ական ԱՕ արկղիկի և 1 ԱՕ պայուսակի պարունակությունը:

12 համայնքների քաղաքական պաշտպանության թիմերի անդամները վերապատրաստվել են և ստացել են Աճյունների հետ վարվելակարգի գիտելիքներ:

12 սահմանամերձ համայնքների քաղաքացիական պաշտպանության թիմերը և Արցախի թիմը մասնակցել են Իջևանում կազմակերպված Առաջին օգնության մրցումներին և գործնականում ցուցադրել իրենց գիտելիքներն ու հմտությունները: Հաղթող է ճանաչվել Մովսես թիմը, իսկ 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրել են Չինարի և Կոթի թիմերը: Արցախի թիմը ստացել է հատուկ մրցանակ:

Տավուշի մարզի 22 համայնքների դպրոցներում իրականացվել են 22 3-ժամանոց դասընթացներ՝ Առաջին օգնություն և Անվտանգ վարքագիծ թեմաներով:

Մասնակցել են 767 աշակերտ և ուսուցիչ:

Դասընթացներից հետո իրականացվել են ուսումնական վարժանքներ, որի ընթացքում երեխաները ցուցադրել են իրենց տեսական գիտելիքներն և գործնական հմտությունները:

Կազմակերպվել են ԱՕ վերապատրաստման դասընթացներ Տավուշի և Վայոց Ձորի մարզերի հրշեջ-փրկարարների համար, որոնց մասնակցել են հրշեջ-փրկարարական ջոկատների հրամանատարները՝ թվով 30 հոգի:

Ֆուտբոլի խաղերի սպասարկում

2019թ. ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի շրջանակներում Երևանում և Գյումրիում կայացած բոլոր խաղերի ընթացքում ՀԿԵԸ ԱՕ խմբերն իրանացրել են ԱՕ ծառայություն:

Հանրային միջոցառումներ

Փետրվարի 19-ին առաջին օգնության ծառայություն է իրականացվել «Ապարանյան ճմեռ 2019» փառատոնի ընթացքում, որտեղ օգնություն է տրամադրվել շուրջ 20 քաղաքացու:

Ապրիլի 24-ին, Մեծ եղեռնի հիշատակի օրվան նվիրված երթի ամբողջ ընթացքում՝ ժամը 9:00-ից մինչև ուշ երեկո, Ծիծեռնակաբերդում հուշահամալիրի տարածքում ԱՕ թիմը Առաջին օգնություն է ցուցաբերել՝ արձագանքելով ավելի քան 100 լուրջ դեպքի:

Մեյի 21-ին Ծիրակի մարզում, Գյումրիում տեղադրվել են Հայկական Կարմիր խաչի ընկերության Առաջին օգնության տաղավարները և առաջին օգնություն է ցուցաբերվել տոնակատարության մասնակիցներին:

Վայոց Ձորի ԱՕ թիմը իրականացրել է ԱՕ ծառայություն Արենի գյուղում «Գինու փառատոն»-ի և Խաչիկ գյուղում «Գաթային փառատոն»-ի ընթացքում:

Արմավիրի ԱՕ թիմը իրականացրել է ԱՕ ծառայություն «1000 տարվա Գյուղամեջ» փառատոնի ընթացքում:



Համայնքային ինտեգրացված տնային խնամք և առողջ երկարակեցություն

ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում ՀԿԽԸ շարունակում է իրականացնել «Համայնքային ինտեգրացված տնային խնամք և առողջ երկարակեցություն» ծրագիրը: Ծրագրի ինտեգրացված տնային խնամքի բաղադրիչի շահա-ռուները տարեց, քրոնիկական հիվանդություն կամ հաշմանդամություն ունեցող անձինք են, որոնք ընտրվում են սոցիալական ծառայությունների, ինչպես նաև առողջապահական համակարգի ներկայացրած ցուցակներից՝ ծրագրի աշխատակիցների կողմից մանրամասն անհատական կարիքի գնահատման հիման վրա:

Ծրագրի շահառուների խնամքն իրականացնում են՝

- 1) խնամքի բուժքույրերը՝ երկու մարզում 7 բուժքույր,
- 2) տնային խնամողները՝ յուրաքանչյուր մարզում 6 տնային խնամող,
- 3) կամավորները՝ Լոռու մարզում՝ 30, Շիրակի մարզում՝ 35, որոնք անցել են համապատասխան դասընթացներ:

Ծառայությունները հստակ տարանջատված են խնամք իրականացնող այս երեք խմբերի համար:

Մասնավորապես, բուժքույրերի կողմից իրականացվում են ներարկումներ՝ ըստ տեղամասի բժիշկի նշանակման, մաշկի, լորձաթաղանթների խնամք, ատամների, բերանի խոռոչի խնամք, պառկելախոցերի կանխարգելում ու մշակում, հիվանդի շարժողունակությունը վերականգնելու նպատակով հատուկ վարժությունների, մերսուսների իրականացում և այլն: Տնային խնամողների կողմից տրամադրվում է աջակցություն կենցաղային հարցերում, մասնավորապես՝ տան մաքրում, սննդի պատրաստում, աջակցություն սնունդ ընդունելիս: Կամավորների կողմից մատուցվող ծառայությունները հիմնականում ներառում են այցելություններ շահառուներին, զրույցներ նրանց հետ, ընթերցանություն, ուղեկցում խանութ, դեղատուն, աջակցություն կոմունալ վճարումների կատարման, փաստաթղթերի լրացման ընթացքում և այլն:

Անհատական կարիքից ելնելով շահառուները ստանում են նաև անվասայլակներ, քայլակներ, հակապարկե-լախոցային բարձեր և ներքնակներ, ձեռնափայտեր, այլ անհրաժեշտ պարագաներ: Բոլոր երեք խնամք իրականացնողները, ծառայության մատուցմանը զուգահեռ, տրամադրում են նաև սոցիալ-հոգեբանական աջակցություն:



Իսկամքն իրականացվում է տեղամասային պոլիկլինիկաների հետ սերտ համագործակցությամբ, տեղամասային բժշկի անմիջական հսկողությամբ, անհրաժեշտության դեպքում նեղ մասնագետների ներգրավմամբ: 2019 թվականի ավարտին ծրագրում ներառվել է 206 շահառու՝ որոնց թվում 159 կին և 47 տղամարդ: 2019 թվականին ՅԿԽԸ սկսել է տնային իսկամքի տրամադրումը համավճարի սկզբունքով: Տարվա ավարտին ՅԿԽԸ ունեցել է գրանցված 164 անվճար և 42 համավճարով շահառու:

Ծրագրի երկրորդ բաղադրիչը ակտիվ երկարակեցությունն է, որի նպատակն է ծերացմանը զուգընթաց երկարացնել առողջ և որակյալ կյանքի տևողությունը: ԻՅ Շիրակի և Լոռու մարզպետարանների հետ համագործակցությամբ 2019 թ.-ին ընտրվել են ևս 5-ական համայնք՝ յուրաքանչյուր մարզում, որտեղ ստեղծվել են տարեցներից կազմված Ակտիվ երկարակեցության Նախաձեռնող խմբեր: Այսպիսով, տարվա ավարտին երկու մարզերում ստեղծվել են 287 մասնակից (140 կին և 147 տղամարդ) ընդգրկող 20 Նախաձեռնող խմբեր:

Մասնակցության վրա հիմնված ակտիվ երկարակեցությունը հնարավորություն է տալիս մարդկանց ակտիվ դեր ունենալ իրենց սեփական և համայնքային կյանքի բարելավման գործընթացում: Մարդիկ ձևավորում են խմբեր, բացահայտում և վերլուծում են իրենց և համայնքի խնդիրները, որոշումներ կայացնում և հանդես գալիս որպես հիմնական դերակատար վերը նշված գործընթացներում: Ծրագրի նպատակն է ավելացնել համայնքային կյանքում ներգրավված տարեց անձանց և նրանց շփումները, այսինքն, խթանել տարեցների մասնակցությունը համայնքային կյանքի տարբեր ոլորտներում:

ՅԿԽԸ-ն ապահովել է Նախաձեռնող խմբերի ուսուցանումը, կարողությունների զարգացումը:

Համայնքապետարանները նախաձեռնող խմբի անդամներին հավաքատեղի են հատկացրել՝ նրանց պարբերական հանդիպումների, աշխատանքի և գործողությունների պլանավորման համար:

Նախաձեռնող խմբերին հնարավորություն է տրվել ծրագրային առաջարկով դիմել փոքր դրամաշնորհներ ստանալու՝ իրենց հետաքրքիր նախաձեռնությունները կյանքի կոչելու համար:

Խարանի և խտրականության նվազեցում և սոցիալ-հոգեբանական աջակցություն

2019 թվականին ՅԿԽԸ-ն շարունակել է ԻՅ առողջապահության նախարարության Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի հետ համագործակցությամբ իրականացնել «Խարանի և խտրականության նվազեցում և սոցիալ-հոգեբանական աջակցություն» դրամաշնորհային ծրագիրը, որի թիրախ են հանդիսանում բոլոր ՏԲ հիվանդները արտահիվանդանոցային փուլում: Ծրագրի շրջանակներում 2019թ. իրականացվել են մի շարք գործառնություններ:

ՏԱԿ ՊՈԱԿ-ի հետ համագործակցության շրջանակներում ՏԱԿ ՊՈԱԿ-ի համապատասխան բաժինը ՅԿԽԸ-ն տրամադրել է ամսական տեղեկատվություն՝ հոսպիտալացումից ամբուլատոր փուլ անցած և արտահիվանդանոցային փուլում գտնվող հիվանդների վերաբերյալ: Առողջության պահպանման առաջնային օղակի, մասնավորապես տուբերկուլոզի ախտորոշմամբ և բուժմամբ զբաղվող բուժանձնակազմի հետ սերտ համագործակցություն է ստեղծվել, որի շրջանակներում ՏԲ կաբինետների կողմից տրամադրվել են բուժումը ամբուլատոր փուլում սկսող, բուժման հետևողականության խախտման միտում ունեցող և հիվանդանոցային փուլից հետո արտահիվանդանոցային փուլում բուժումը ջջարունակած հիվանդների մասին տեղեկատվություն:



ՀԿԽԸ հոգեբանները և կամավորները հանդիպում են կազմակերպել հիվանդների հետ, սոցիալ-հոգեբանական և հոգեբանական աջակցություն տրամադրել նրանց՝ շեշտադրելով բուժմանը հետևողական լինելու կարևորությանը: Այցերի, խորհրդատվությունների վերաբերյալ վարվել է էլեկտրոնային շտեմարան: Բուժումը բարեհաջող ելքով ավարտած հիվանդների համար կազմակերպվել են «վերածնունդի» տոնակատարություններ: Խարանի և խտրականության սվազեցմանն ուղղված հանդիպումներ են կազմակերպվել բնակչության հետ՝ ք. Երևանում և ՀՀ բոլոր մարզերում: Իրականացվել են ֆյուլորոգրաֆիկ հետազոտություններ ՏԲ կոնտակտավորների շրջանում:

Շաբարային դիաբետի կանխարգելում

2019 թվականի ընթացքում ՀՀ Արարատի, Արագածոտնի և Գեղարքունիկի մարզերում իրականացվել է Շաբարային դիաբետի կանխարգելմանը և խոցելի խմբերի կրթմանը նվիրված ծրագիրը: Ծրագրի գործունեության թիրախ հանդիսացող 48 համայնքներում (16 յուրաքանչյուր մարզում) ձևավորված 24 ինքնօգնության խմբերում իրականացված գործունեության շնորհիվ շահառուները ստացել են անհրաժեշտ գիտելիքներ շաբարային դիաբետի, ճիշտ սննդակարգի և ընդհանրապես առողջ ապրելակերպի վերաբերյալ: Կարևոր է նշել նաև, որ այս ծրագիրը չի սահմանափակվել միայն ինքնօգնության խմբերով, այլև ներգրավել է 90 բժշկի և 64 բուժքրոջ՝ վերջիններիս ուշադրությունը սևեռելով շաբարային դիաբետի խնդիրներին: Այդ նպատակով կազմակերպվել են սեմինարներ և կլոր սեղանաբանարկումներ: Նշանակալի է թվով 160 կամավորների ներդրումը ծրագրի կայացման և իրականացման գործընթացում, որոնք օգնել են խմբերի ձևավորմանը, առողջ ապրելակերպի ջատագովմանը, միջոցառումների կայացմանը և վերջիններիս շարունակական բնույթ կրելուն:

Արտակարգ իրավիճակներում առողջապահական խնդիրների նկատմամբ տեղական համայնքների դիմակայունության բարձրացում Հարավային Կովկասում

2019 թվականին ՀԿԽԸ սկսել է իրականացնել «Արտակարգ իրավիճակներում առողջապահական խնդիրների նկատմամբ տեղական համայնքների դիմակայունության բարձրացում Հարավային Կովկասում» ծրագիրը, որի նպատակն է բարձրացնել համայնքների դիմակայունությունը՝ բնակչության առողջության վրա աղետների և արտակարգ իրավիճակների բացասական ազդեցությունը և հետևանքները նվազեցնելու համար, ինչպես նաև բարելավել համայնքների համաճարակներին դիմակայելու, առաջին օգնության, հոգեբանական աջակցության կարողությունները: Ծրագրում ընդգրկված Տավուշի, Սյունիքի, Վայոց Ձորի մարզերում և Երևանում ստեղծվել է Կարմիր խաչի կամավորների ցանց՝ բաղկացած 24 առաջնորդներից և 105 համայնքային կամավորներներից: Կարմիր խաչի վերապատրաստված համայնքային կամավորները կիրականացնեն համայնքների կարողությունների զարգացմանը և իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, որոնք կնպաստեն արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացած առողջապահական խնդիրների լուծմանը: Ծրագիրը կնպաստի մարզային և ազգային մակարդակներում արտակարգ իրավիճակներում առողջապահական կարողությունների զարգացմանը՝ Առողջապահության նախարարության, Արտակարգ իրավիճակների նախարարության և Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի սերտ համագործակցության, ինչպես նաև Կարմիր խաչի և Կարմիր մահիկի շարժման, ԱՀԿ-ի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի այլ գերատեսչությունների և միջազգային ՀԿ-ների միջև միջլորտային համակարգման մեխանիզմների միջոցով:



Աջակցություն համայնքներին

2018թ.հուլիսից մեկնարկած «Սիրիահայերի դիմա-կայունության բարձրացում» ծրագիրը իրականացվում է Եվրոմիության, Ավստրիական Կարմիր խաչի և Ավստրիական Չարզացման գործակալության համատեղ ֆինանսավորմամբ:

Ծրագրի սոցիալ - հոգեբանական բաղադրիչի շրջանակներում շարունակվել է երիտասարդ կամավորների միջոցով սոցիալ-հոգեբանական այցելու ծառայության կազմակերպումը Երևան, Աբովյան և Հրազդան բաղաբնույթում 200 միայնակ փախստական հանրակացարանաբնակ և սիրիահայ տարեցների համար: Ծառայական այցելություններ են կազմակերպվել կամավորների կողմից, եռամսյակը մեկ անգամ տրամադրվել են սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ:

Տարվա ընթացքում կամավորները շահառուների սոցիալականացմանը ու հանգստի կազմակերպմանն աջակցելու նպատակով իրականացրել են զանազան սոցիալական և մշակութային միջոցառումներ՝ այցելություններ թատրոններ, համերգներ, տեսարժան վայրեր:

Ծրագրի շրջանակներում հիմնված Սիրիահայերի աջակցման Սոցիալ-հոգեբանական կենտրոնը, որի նպատակն է նպաստել սիրիահայերի ինտեգրմանը՝ հոգեբանական անհատական և խմբային խորհրդատվություններ է իրականացրել սիրիահայ տարբեր տարիքային խմբերի, ինչպես նաև ընտանիքների համար: Յուրաքանչյուր ամիս սիրիահայերի սոցիալականացմանն ուղղված մշակութային միջոցառումներ է իրականացվել: Մշակվել և շահագրգիռ կազմակերպությունների միջոցով տարածվել է կենտրոնի ծառայությունները լուսաբանող տպագրական և առցանց կյուբեր:

Ծրագրի կրթական բաղադրիչով 4 տարատեսակ ծրագրեր են իրականացվել Երևանի 6 դպրոցներում, ինչպես նաև պետական ու 34 ներկայացուցիչների համար:

«Երեխաների կայուն զարգացում» ենթածրագիրը 20 պարապմունքներից բաղկացած դասընթաց է: Այն իրականացվել է վերապատրաստված 13 կամավորների օգնությամբ՝ շուրջ 90 երեխաների համար:

«Յանդուրժողականության ուսուցում» ենթածրագրի շրջանակներում 90 ուսուցիչներ վերապատրաստման դասընթացներ են անցել կրթական ոլորտի փորձագետների ներգրավմամբ, որից հետո ղեկավարվելով ծրագրի համապատասխան ուղեցույցներով տարրական դասարանների շուրջ 6000 աշակերտների համար իրականացրել են դասընթացներ:

«Հոգեբանական առաջին օգնություն» ենթածրագրով նախատեսված դասընթացներ են իրականացվել շուրջ 140 մասնակիցների համար, այդ թվում ուսուցիչներ, ՏԻՄ և 34 ներկայացուցիչներ:

«Երիտասարդների կայուն զարգացում» ենթածրագրով պլանավորված կարողությունների զարգացման եռօրյա ճամբար է իրականացվել թվով 20 երիտասարդների համար, որոնք կազմել են իրենց թիմերը՝ համախմբելով սիրիահայ և տեղացի երիտասարդների, մշակել են համայնքի կարիքի վրա հիմնված ծրագրեր և ստացել ֆինանսական աջակցություն իրենց գաղափարները կյանքի կոչելու համար:

2018թ. մեկնարկած «ԵՄ հանուն երիտասարդության. Աշխատունակության խթանում» ծրագիրը իրականացվում է ՀՀ Գեղարթունիքի և Տավուշի մարզերում: Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ կողմից և իրականացվում Դանիական ԿԻ հետ համագործակցությամբ: Ծրագրի շրջանակներում Իջևան, Դիլիջան, Սևան և Գավառ քաղաքներում հիմնված երիտասարդական ակումբներում իրականացվել են բազմաթիվ դասընթացներ, որոնք նպատակ ունեն կրթել երիտասարդներին, զարգացնել նրանց կարողությունները՝ աշխատաշուկայում մրցունակ լինելու համար: Մարզի երիտասարդների կարիքների գնահատման և աշխատաշուկայի ուսումնասիրության վրա կառուցված դասընթացների և միջոցառումների շարքը նպաստում է մարզաբնակ երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և աշխատանք գտնելու ոլորտում առկա խնդիրների լուծմանը: Ծրագրի արդյունավետությանը նպաստող կարևորագույն հանգամանք էր Տեղական ինքնակառավարման մարմինների և դաշտում գործող հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությունը: Ծրագիրը տարածաշրջանային է՝ ներառելով նաև Բելառուսական և Վրացական Կարմիր խաչի Ազգային ընկերություններին, որոնց երիտասարդ պատվիրակների հետ միասին մեր երիտասարդները մասնակցեցին Դանիական ամենամյա «Առաջնորդության Ակադեմիայի» 14 օրյա դասընթացներին և իրենց փորձն ու գիտելիքը փոխանակելու լավագույն հնարավորություն ունեցան:

«Կրթական աջակցություն Հայաստանի անտեսված և անապահով պատանիներին և աղջիկներին» ծրագիրը Գերմանական ԿԻ Բադեն-Վուլտենբերգի երկրամասային մասնաճյուղի ֆինանսավորմամբ իրականացվում է Արմավիրում և Իջևանում թվով 48 պատանիների համար: Ծրագրի շրջանակներում երիտասարդները մասնակցել են մասնագիտական դասընթացների՝ վարսավիություն, կարուձև, խոհարարություն և այլն: ՀԿԻԸ կամավորների կողմից երիտասարդների համար կազմակերպվել են նաև ինտեգրման և ընդհանուր զարգացման ծրագրերը խթանող հանդիպումներ: Շահառու պատանիներին՝ եռամսյակը մեկ անգամ տրվել են նաև սննդի փաթեթներ:

«Ժպիտների ակումբ» ծրագիրն իրականացվում է Երևանի և Կոտայքի մարզերի հանրակացարաններում բնակվող երեխաների համար՝ հանրակացարաններում հատուկ կահավորված սենյակներում: Ծրագիրը նպատակ ունի նպաստելու երեխաների կրթական և ինքնազարգացման գործընթացներին՝ բազմակողմանի կրթական, մշակութային և ինտեգրման միջոցառումների միջոցով: Երիտասարդ կամավորներն ամենօրյա պարապմունքներ են անցկացրել երեխաների համար, իրականացրել են դասապատրաստում և զանազան խմբակների վարում (մաթեմատիկա, օտար լեզուներ, աշխարհագրություն նաև համակարգչային դասընթացներ): Պարապմունքներից զատ ամեն օր կամավորները կազմակերպել են սպորտային և ժամանացային միջոցառումներ, իսկ ամեն ամիս երեխաները մասնակցել են մշակութային միջոցառման՝ այց թատրոն, թանգարան և տեսարժան վայրեր: Երեխաների համար կամավորները կազմակերպել են մի շարք տոնակատարություններ՝ Ս. Չատիկի, Ամանորի, Հունիսի 1-ի և այլն: Իսկ ամռանը շուրջ 40 երեխաների համար Շաղկաձորում կազմակերպվել է հանգստի, ուսուցման և վերականգնողական ճամբար:



Գթություն

ՀԿԻԸ Սյունիքի մարզային մասնաճյուղը՝ «Չաարատ Կապանը» փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) աջակցությամբ իրականացնում է «Գթություն» ծրագիրը, որի շրջանակներում 200 միայնակ տարեց տարին մեկ ստանում են սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ և դեղորայք: 30 անկողնային միայնակ տարեցները ծանրոցները ստանում են տարին երկու անգամ, իսկ կամավորները նրանց բոլորի կողքին են լինում ամբողջ տարին՝ նշելով Ամանորը, Չատիկը և ծննդյան օրերը:

Բարեգործական ճաշարան՝ Մասիսում

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Շվեյցարական Կարմիր խաչի աջակցությամբ, 2017 թ. Հունիսից բարեգործական ճաշարան գործարկեց Արարատի մարզի Մասիս քաղաքում: Այս նախաձեռնության շնորհիվ 85 տարեցներ ոչ միայն ապահովված են տաք, սննդարար ճաշով և հնարավորություն ունեն ամեն օր շփվել միմյանց հետ, այլև շրջապատված են ՀԿԻԸ կամավորների ու անձնակազմի ջերմությամբ ու հոգատարությամբ: Շահառուներն ընտրվել են հստակ որոշված կարիքների և մշակված չափանիշների հիման վրա: Գործընթացն իրականացվել է սերտորեն համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների, հատկապես՝ մարզպետարանի և քաղաքապետարանի սոցիալական հարցերի բաժինների հետ: Հայկական Կարմիր խաչի ընկերության նախաձեռնությանը միացել են և իրենց աջակցությունն են ցուցաբերում նաև տեղական ինքնակառավարման մարմիններն ու մասնավոր սեկտորը՝ Մասիս քաղաքապետարանն աջակցել է տարածքի վերանորոգմանը, որն անվարձաբաժանորդ տրամադրվել էր մասնավոր անձի կողմից, «Ապարան» ջրի գործարանի կողմից տրամադրվում է խմելու ջուր, «Վեգա» ընկերության կողմից՝ կենցաղային տեխնիկա:



Հայկական Կարմիր խաչի ընկերությունը կստանձնի Գյումրու տուն-ինտերնատի կառավարումը

Դեկտեմբերի 19-ին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ ստորագրված հուշագրի համաձայն Հայկական Կարմիր խաչի ընկերությունը կստանձնի Գյումրու տուն-ինտերնատի կողմից տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող շուրջօրյա խնամքի իրականացումը: Այստեղ կներդնենք Կարմիր խաչի Կարմիր մահիկի միջազգային շարժման փորձը, մասնավորապես Շվեյցարական Կարմիր խաչի հետ համագործակցությամբ ձեռք բերված հմտություններն ու փորձառությունը, որի շնորհիվ կբարելավենք տունինտերնատում բնակվող խնամքի կարիք ունեցող տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակը: Այդ թվում կբարելավվեն շենքային պայմանները, կներդրվի ակտիվ երկարակեցության բաղադրիչը, կապեր կստեղծենք Շիրակի մարզում արդեն իսկ գործող տարեցներից կազմված տասը համայնքային նախաձեռնող խմբերի հետ, ինչը կնպաստի սոցիալիզացիային և համայնքային կյանքում ընդգրկվելուն:

Բացի այդ, նախատեսվում է աջակցել տարեցների նախաձեռնություններին՝ իրենց նախասիրություններին համապատասխան, օրինակ՝ ասեղնագործության կամ կարունձևի խմբակների միջոցով: Կշարունակվի բժշկասոցիալական և հոգեբանական սպասարկման կազմակերպումը, շուրջօրյա խնամքը՝ էապես բարելավելով դրա որակը: Տուն-ինտերնատի աշխատակազմի անդամների առնվազն 70 տոկոսի հետ կվերակնքվեն աշխատանքային պայմանագրերը: Համագործակցության շրջանակներում կիրականացվի առնվազն 163 միլիոն դրամի ներդրում՝ մատուցվող ծառայությունների որակի և կազմության պայմանների բարելավման ուղղությամբ: Միայն 2020թ. ՀԿԽԸ-ն իրականացնելու է առնվազն 87 միլիոն ՀՀ դրամի ներդրում՝ 6 բնակելի հատվածներից 4-ի վերանորոգման համար: Բնակելի 4 հատվածներից մեկը՝ նախատեսված առնվազն 20 խնամվողի համար՝ կկահավորվի և կհամապատասխանեցվի անկողնային խնամքի կարիք ունեցող անձանց մասնագիտացված խնամքի համար: Տուն-ինտերնատում խնամվողների ընդհանուր թիվը 160 է:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ, ԿԱՄԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ



Երիտասարդական Կարմիր Խաչը (ԵԿԽ) Հայկական Կարմիր խաչի ընկերության շրջանակներում գործող կամավոր անդամների երիտասարդական միավորում է, որը հիմնադրվել է 1992թ. նոյեմբերի 3-ին: Այն գործում է ՀԿԽԸ բոլոր մարզային և տարածքային մասնաճյուղերում և գործունեություն է ծավալում հետևյալ ոլորտներում.

1. Սոցիալական աջակցություն

իրականացնում է սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագրեր ուղղված հանրակացարանաբնակ միայնակ ծերերին, ծնողազուրկ, փախստական և անապահով ընտանիքների երեխաներին

2. Առողջապահություն

կազմակերպում է բազմաբնույթ հանրային միջոցառումներ ու առողջ ապրելակերպի թեմաներով դասընթացներ ուսումնական հաստատություններում

1. Միջազգային համագործակցություն

- իրականացնում է երիտասարդ կամավորների փոխանակում Բրիտանական և Գերմանական Կարմիր խաչերի հետ «Եվրոպական կամավորական ծառայություն» ծրագրի շրջանակներում
- կազմակերպում և մասնակցում է միջազգային հավաքների, ճամբարների, սեմինարների, թրեյնինգների

2. Մարդասիրական արժեքների լուսաբանում

- կազմակերպում է Կարմիր խաչի մարդասիրական գաղափարների լուսաբանում դպրոցներում և ԲՈՒՅ-երում
- նպաստում է կամավորական շարժման խթանմանը, կամավորների հավաքագրմանն ու ՀԿԽԸ գործունեության մեջ ներգրավմանը





Մենք շարունակաբար աշխատանք ենք տանում մարդասիրական արժեքների տարածման, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման, Հիմնարար սկզբունքների, Միջազգային մարդասիրական իրավունքի, խորհրդանշանի գործածության և չարաշահման, մեր գործունեության ու առաքելության վերաբերյալ իրազեկության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:


2019 թվականի օգոստոս-դեկտեմբեր ամիսերին մարզային /տարածքային տասնմեկ (Լոռի, Շիրակ, Տավուշ, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Արագածոտն, Վայոց ձոր, Սյունիք, Կոտայք, Ստեփանավան) և համայնքային հինգ մասնաճյուղեր (Դիլիջան, Բերդ, Նոյեմբերյան, Վարդենիս և Գորիս) բարձրացրեցին հանրային իրազեկությունը մարդասիրական արժեքների և ԿԽ/ԿՄ շարժման վերաբերյալ լուսաբանման մի շարք ծրագրերի միջոցով՝ ներառյալ դպրոցներում դասընթացներ, նկարչական մրցույթներ, բնապահպանական արշավներ, թեմատիկ ճամբարներ և այլ գործողություններ:

Այս գործողությունները համակարգվել են ՀԿԽԸ-ի լուսաբանման կամավորների կողմից՝ լուսաբանվել է ավելի քան 10.000 մարդ՝ 220 դպրոցներից և ուսումնական այլ հաստատություններից:


2019 թվականին ՀԿԽԸ-ն միացավ ԿԽՄՖ - ի կողմից հայտարարված գլոբալ առցանց իրազեկման արշավներին, այդ թվում՝ «Ես սիրում եմ Կարմիր խաչը», «Կանայք կարմիրով» և «Կլիմայի փոփոխության դեմքերը»:

Ավելի լայն մասշտաբով թիրախային լսարանը շարունակաբար լուսաբանվել է սոցիալական ցանցերում ՀԿԽԸ-ի առավել ընդլայնված ներկայության, տեղեկատվական նյութերի բաշխման և հանրային միջոցառումների միջոցով:

Մայիսի 8-ի՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի համաշխարհային օրվա կապակցությամբ հանրապետության բոլոր մարզերից 3-ական դպրոցում կազմակերպվեց «Մարդասիրությունը գործողության մեջ» շարադրություն դպրոցականների շրջանում:

Ես  Կարմիր խաչը, որովհետև
առանց նրանց չգիտեմ, թե ինչպես
պետք է ապրեի, նրանք
իմ հարազատներն են:

Աննա Սորոկինա, 88 տարեկան,
Վանաձոր, Լոռի
«Համայնքային ինտեգրացված տնային
խնամք և առողջ երկարակեցություն»
ծրագրի շահառու

I  Red Cross, as I don't imagine, how
could I live without them, they all are
so hearty!

Anna Sorokina, 88, Vanadzor, Lori
“Integrated Community-Based Home Care
Service Provision And Healthy Ageing”
programme beneficiary



**ՄԱՅԻՍԻ 8, ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԵՎ ԿԱՐՄԻՐ
ՄԱՅԻԿԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐԸ**

Ես  Կարմիր խաչը
I Red Cross



1618 աշակերտ մասնակցեց լուսաբանման դասընթացի, գրվեց 513 շարադրություն, պարզևատրվեցին լավագույն 99 աշխատանքները:

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի համաշխարհային օրվա կապակցությամբ Երևանի Մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանում կազմակերպվեց հանրային միջոցառում՝ «Ես սիրում եմ Կարմիր խաչը» խորագրով:

ՀՀ տարբեր ԲՈՒՀ-երի Ժուռնալիստիկայի ֆակուլտետների 20 ուսանողի համար Մեդիամաքս լրատվական գործակալության հետ միասին կազմակերպել ենք դասընթաց՝ Կարմիր խաչի գործունեությունը և մարդասիրական խնդիրների լուսաբանումը թեմայով: Մեր գործունեությունը ներկայացրել ենք www.redcross.am կայքի, սոցիալական մեդիայի մեր էջերի, ինչպես նաև տարբեր ՉԼՄ-ների միջոցով:

2019 թվականի ընթացքում ուղարկվել է 18 Մամուլի հաղորդագրություն, կայքում և սոցիալական ցանցերում տեղադրվել է մոտ 398 հոդված, պատրաստվել է 14 տեսահոլովակ և մեկ ֆիլմ:



Հայկական Կարմիր խաչի ընկերությունն իր գործունեության ընթացքում մշտապես համագործակցում է Կարմիր խաչի և Կարմիր մահիկի (ԿԽ և ԿՄ) միջազգային շարժման բոլոր բաղկացուցիչների, Կառավարության, միջազգային և տեղական՝ մասնավոր ու հասարակական կազմակերպությունների հետ:

Հայկական Կարմիր խաչի ընկերության պատվիրակության այցը Ավստրիական Կարմիր խաչ

Հայկական Կարմիր խաչի ընկերության Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը և Միջազգային բաժնի վարիչ Մարիանա Հարությունյանը այցելեցին Ավստրիական Կարմիր խաչ՝ վերջինիս հրավերով, մասնակցելու գործընկերության համակարգման ժողովին, քննարկելու ներկա և ապագա համագործակցությունը:

Այցի շրջանակներում նաև այցեր եղան Ավստրիական Կարմիր խաչի մարզային կառույցներ՝ ծանոթանալու մասնաճյուղերի գործունեությանը և քննարկելու հետագա հնարավոր համագործակցությունը:

Որպես այցի շարունակություն, Ավստրիական Կարմիր խաչի պատվիրակությունը՝ այցելեց Հայկական Կարմիր խաչի ընկերություն: Այցի նպատակն էր ծանոթանալ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից՝ Ավստրիական Կարմիր խաչի աջակցությամբ իրականացվող ծրագրերի ընթացքին ու ձեռքբերումներին, քննարկել ապագա համագործակցության ընդլայնումը: Պատվիրակությունը, որի կազմում էին Միջազգային համագործակցության ղեկավար Վոլտեր Զայեկը և մի շարք մասնաճյուղերի ղեկավարներ, այցելեց ԶԿԽԸ

